поперечный разрез

Quintaner *m -s; -*

հինգերորդ դասարանի
 աշակերտ

ученик пятого класса

Quitte *f* -; - *n*

Quote *f* -; - *n*

սերկևիլ

քվոտա, բաժին, մուծում

айва (плод)

квота, доля, взнос

R r

Rächer *m* -s; -

Rad *n* -(e)s; Räder

Radierung *f* -; -en

radikal *a*

Raiffeisenbank *f* -; ohne *pl*

Rang *m* -(e)s; Ränge

rangieren *vi*

rasch *a, adv*

rasieren *vt*

sich ~

Rat *m* -(e)s; Räte, Ratschläge

parlamentarischer ~

վրիժառու

1. անիվ

2. հեծանիվ

փորագրում, փորագրություն
արմատական, հիմնովին.

ռադիկալ, վճռորոշ

գյուղատնտեսական

փոխօգնության բանկ

1. աստիճան

2. հերթականություն

3. կոչում

տեղ զբաղեցնել (ըստ

նշանակության, կարգի և այլն)

արագ, շտապ, շուտ

սափրել, ածիլել

սափրվել

խորհուրդ

պառլամենտական խորհուրդ

мститель

1. колесо

2. велосипед

гравюра

коренной; радикальный;

решительный

сельскохозяйственный банк

взаимопомощи

1. степень

2. разряд

3. звание

занимать место (по порядку,
значению и т.д.)

быстрый, скорый; быстро, скоро

брить

бриться

совет

парламентский совет

Rate *f -; -n*

Arbeitslosigkeits~

Inflations~

Rathaus *n -es; ...häuser*

ratifizieren *vt*

Rating *n -s; -s*

Rationalisierung *f -; -en*

ratlos *a*

Ratlosigkeit *f -; ohne pl*

Rätsel *n -s; -*

syn. Geheimnis n

rätselhaft *a*

Ratte *f -; -n*

Rauch *m -(e)s;*

Raum *m -(e)s; Räume*

Raumelement *n -(e)s; -e*

1. նորմա. դրույք

2. մաս, բաժին

3. ինդեքս

գործազրկության մակարդակ

ինֆլացիայի աստիճան

քաղաքապետարան

վավերացնել

վարկանիշ

աշխատանքի

արդյունավետության

բարձրացում

անօգնական

անօգնականություն,

շվարածություն

հանելուկ, առնիժված. գաղտնիք

հանելուկային, խորհրդավոր,

առնիժվածային, անհասկանալի

առնետ

ծուխ, մուխ

1. տեղ, տարածություն

2. շրջան, գոտի

տարածական կոմպոզիցիայի

տարր

1. норма; ставка

2. часть, доля, взнос

3. индекс

уровень безработицы

темпы инфляции

ратуша

ратифицировать

рейтинг

рационализация, повышение

производительности труда

беспомощный

беспомощность, растерянность

загадка; тайна

загадочный, таинственный,

непонятный, необъяснимый

крыса

дым; чад

1. место, пространство

2. район, зона

элемент пространственной

композиции

Raumfahrt *f -; ohne pl*

rauschend *a*

Reaktion *f -; -en*

Realität *f -; ohne pl*

Realschule *f -; -n*

Rebhuhn *n -(e)s; ...hühner*

Rechenschaft *f -; -en*

~ geben, ~ ablegen

Recherche *f -; -n*

Rechnung *f -; -en*

Recht *n -es; -e*

alle ~e genießen

öffentliches ~

~ aberkennen

~ auf Arbeit und Bildung

~ auf freie Entfaltung der
Persönlichkeit

~ auf Freizügigkeit

staatsbürgerliche ~e

unveräußerliches ~

Vereins- und Gesellschafts ~

տիեզերագնացություն

աղմկալի, ցայտուն, բուռն

ռեակցիա, հետադիմություն

իրականություն

ռեալական դպրոց (միջնակարգ

դպրոց ԳԴՀ-ում)

կաքավ

հաշվետվություն

հաշվետվություն տալ

հետազոտում, որոնում

հաշիվ

իրավունք

բոլոր իրավունքներից օգտվել

հասարակական իրավունք

իրավունքներից զրկել

աշխատանքի և կրթության

իրավունք

անհատի ազատ զարգացման

իրավունք

ազատ տնտեսարարման

իրավունք

քաղաքացիական իրավունքներ

անօտարելի իրավունք

միություններ և ընկերություններ

космонавтика

шумный, броский, бурный

реакция

реальность; действительность

реальная школа (средняя школа

в ФРГ)

куропатка

отчёт

давать отчёт

поиск, розыск

вычисление

право

пользоваться полнотой прав

публичное право

лишать прав

право на труд и образование

право на свободное развитие

личности

право свободного передвижения

гражданские права

неотчуждаемое право

совокупность правовых норм,

rechtfertigen <i>vt</i> <i>syn. verteidigen</i>	հիմնադրելու իրավունք	регулирующих деятельность объединений, союзов и корпораций
Rechtgläubige <i>f, m -n; -n</i>	արդարացնել, արդար ճանաչել	оправдать, оправдывать
rechtlich <i>a</i>	նուդափառ	православный, правоверный
Rechtsangleichung <i>f -; -en</i>	իրավական իրավունքի համապատասխանեցում, իրավունքի համաձայնեցում, իրավունքի անալոգիա օրինական իրավունք, հավակնություն պաշտպան, փաստաբան դատաստանագիրք իրավունքի զարգացում իրավական ձև իրավական հիմք իրավակարգ 1. արդարադատություն, արդարադատության իրականացում 2. դատավարություն դատավարություն,	правовой уподобление, уравнивание права (напр. членов европейских сообществ) законное право, притязание адвокат, защитник судебник развитие права правовая форма правовое основание правопорядок 1. правосудие, осуществление правосудия 2. судопроизводство судопроизводство,
Rechtsanspruch <i>m -(e)s; ...ansprüche</i>		
Rechtsanwalt <i>m -(e)s; ...wälte</i>		
Rechtsbuch <i>n -(e)s; ...bücher</i>		
Rechtsentwicklung <i>f -; -en</i>		
Rechtsform <i>f -; -en</i>		
Rechtsgrundlage <i>f -; -n</i>		
Rechtsordnung <i>f -; ohne pl</i>		
Rechtspflege <i>f -; ohne pl</i>		
Rechtsprechung <i>f -; -en</i>		

Rechtsschutz <i>m -(e)s;</i>	դատասացություն, դատական պրակտիկա,	судоговорение, судебная практика, отправление правосудия
Rechtsstreitigkeit <i>f -; -en</i>	արդարադատության հրագործում	
Rechtssystem <i>n -s; -e</i>	իրավապաշտպանություն	правовая защита
Rechtsstaat <i>m -(e)s; -en</i>	դատական վեճ, դատական գործընթաց, դատավարություն	судебная тяжба, судебный процесс, спор
Rechtsverletzung <i>f -; -en</i>	իրավական համակարգ	правовая система
Rechtsweg <i>m -(e)s; ohne pl</i>	իրավական պնտություն	правовое государство
	իրավախախտում	правонарушение
	գործի լսման դատական կարգ	судебный порядок рассмотрения дела
Rechtswidrigkeit <i>f -; -en</i>	հակաօրինականություն	противоправность, противозаконность
Rechtswissenschaft <i>f -; -en</i>	իրավագիտություն	юриспруденция, правовая наука, правоведение
Refinanzierung <i>f -; ohne pl</i>	վերաֆինանսավորում	рефинансирование
Reformverpflichtung <i>f -; -en</i>	բարեփոխումներ պարտավորություն	обязательство о проведении реформы
Regal <i>n -(e)s; -e</i>	գրադարակ	полка
rege <i>a</i>	աշխույժ, կենսալի	живой, оживленный
regeln <i>vt</i>	կարգավորել, կարգի բերել	регулировать, упорядочивать
Regeltechnik <i>f -; ohne pl</i>	ինքնակարգավորում, ինքնակառավարում	автоматическое регулирование, автоматическое управление

Regelung <i>f</i> -; -en	կարգավորում, կանոնավորում	регулирование, упорядочение
Regenbogen <i>m</i> -s; ...bögen	ծիածան	радуга
Regenmantel <i>m</i> -s; ...mäntel	թիկնոց	плащ
regieren <i>vt</i>	կառավարել	управлять
Regierung <i>f</i> -; -en	կառավարություն	правительство
Struktur der ~	կառավարության կառուցվածք	структура правительства
Regierungsbezirk <i>m</i> -(e)s; -e	վարչական տարածք (մաս)	административный округ
Regierungssitzungen <i>pl</i>	կառավարության նիստեր	заседания правительства
Vorsitz in den ~	կառավարության նիստերի նախագահություն	председательство на заседаниях правительства
Regierungssystem <i>n</i> -s; ohne <i>pl</i>	կառավարման ձև (համակարգ)	форма (система) правления
Regiment <i>n</i> -s; -e und -er	1. իշխանություն, կառավարչություն	1. господство, власть
	2. գունդ (ռազմական)	2. полк (военный)
Register <i>n</i> -s; -	ցանկ, ցուցակ. մատյան	список, реестр; регистр
Registerrichter <i>m</i> -s; -	հաշվառմամբ զբաղվող՝ մատենավար դատավոր	судья, ведущий реестры
registrieren <i>vt</i>	գրանցել	записывать
Reh <i>n</i> -(e)s; -e	այծյամ, քարայծ	косуля, лань
Reich <i>n</i> -es; -e	կայսրություն, միապետություն	империя, государство
reichen <i>vi</i> (bis zu <i>D</i>)	1. հասնել, տարածվել	1. достигать, простираться
	2. տալ, մեկնել	2. давать, подавать, протягивать
Reichsbahn <i>f</i> -; -en	պետական երկաթուղի	государственная железная дорога

Reichsgericht *n* -(e)s; ohne *pl*

Reichskanzlei *f* -; ohne *pl*

Reichstag *m* -(e)s; ohne *pl*

Reichtum *m* -s; Reichtümer

Reihung *f* -; -en

rein *a*

adv

ins Reine schreiben

Reinheit *f* -; ohne *pl*

Reinschrift *f* -; -en

Reiseführer *m* -s; -

Reisetagebuch *n* -(e)s; ...bücher

reißend *a*

reiten (ritt, geritten) *vi*

Reiz *m* -es; -e

reizvoll *a*

relativ *a*

Relevanz *f* -;

Relief *n* -s; -s und -e

reliefhaft *a*

կայսերական գերագույն
դատարան

կայսերական գրասենյակ
ռայխստագ, Գերմանիայի
պառլամենտ

հարստություն

դասավորություն

մաքուր. անմեղ. հստակ
բացահայտ, միանգամայն
մաքրագրել

մաքրություն. անմեղություն

մաքրագրություն

1. ուղեցույց

2. էքսկուրսավար. առաջնորդ.

ճանապարհորդային օրագիր

արագահոս, արընթաց

ձիարշավել

հմայք, թովչություն, հրապույր

հմայիչ, հրապուրիչ, հիասքանչ

հարաբերական

կարևորություն.

արդիականություն

հարթաքանդակ

արտահայտիչ, ուռուցիկ

имперский верховный суд

имперская канцелярия
рейхстаг, парламент Германии

богатство

выстраивание

чистый; невинный; ясный

совсем, совершенно

переписывать начисто

чистота; невинность

переписка набело

1. путеводитель

2. экскурсовод; проводник; гид

путевой дневник

бурный, быстрый

ездить верхом

прелесть, очарование

прелестный, привлекательный

относительный, релятивный

важность; актуальность

барельеф

рельефный, выпуклый

Remissionen <i>pl</i>	դրամական փոխանցումներ	денежные переводы
Renke <i>f -; -n</i>	սիգ (ծուկ)	сиг (рыба)
renovieren <i>vt</i>	վերանորոգել (բնակարան)	ремонтировать (квартиру)
Renovierung <i>f -; -en</i>	վերանորոգում	ремонт
Rente <i>f -; -en</i>	կենսաթոշակ	рента, пенсия
Alters~	ծնրության կենսաթոշակ	пенсия по старости
Invaliden~	հաշմանդամության	пенсия по инвалидности
	կենսաթոշակ	пенсия в случае утраты
Witwen~	կերակրողին կորցրածի նպաստ	кормильца
Rentenalter <i>n -s; -</i>	կենսաթոշակային տարիք	пенсионный возраст
Rentantritt <i>m -(e)s; -e</i>	թոշակի անցնելը	выход на пенсию
Rentensystem <i>n -s; -e</i>	կենսաթոշակային համակարգ	пенсионная система
Rentenversicherung <i>f -; ohne pl</i>	կենսաթոշակային	пенсионное страхование
	ապահովագրություն	
Rentner <i>m -s; -</i>	թոշակառու, կենսաթոշակառու	пенсионер
Repräsentation <i>f -; -en</i>	ներկայացուցչություն	репрезентативность,
		представительность
repräsentativ <i>a</i>	աչքի ընկնող, ներկայանալի	видный, представительный
repräsentieren <i>vt</i>	ներկայացնել	представлять
Reproduktion <i>f -; -en</i>	վերարտադրություն	воспроизводство, репродукция
normale ~	նորմալ վերարտադրություն	нормальное воспроизводство
Reptil <i>n -s; -ien</i>	սողուն	пресмыкающееся животное,
		рептилия
Republik <i>f -; -en</i>	հանրապետություն	республика

Sicherheit der ~	հանրապետության անվտանգություն	безопасность республики
Resolution <i>f</i> -; -en	բանաձև, որոշում	формула, определение
Ressort [re'so:t] <i>n</i> -s; -s	գործունեության ոլորտ, գերատեսչություն	область деятельности; ведомство
Ressort(ein)teilung <i>f</i> -; -en	պարտականությունների բաշխում	распределение обязанностей
Rest <i>m</i> -(e)s; -e	մնացորդ, մնացած մաս	остаток, оставшаяся часть
Restauration <i>f</i> -; -en	վերականգնում	реставрация
restaurieren <i>vt</i>	վերականգնել	реставрировать
retten <i>vt</i>	փրկել	спасать
Rettungsdienst <i>m</i> -es; -e	փրկարար ծառայություն	спасательная служба, служба
Revision <i>f</i> -; -en	շտապ օգնության ծառայություն վճռաբեկ բողոք, վճռաբեկություն, վերանայում, հսկողություն, բողոքարկում	скорой помощи кассационная жалоба, кассация пересмотр, контроль
Revisionsverfahren <i>n</i> -s;	գործի վերանայման վարույթ	порядок кассационного производства
Rheumaleidende <i>f, m</i> -n; -n	ռևմատիկ, հոդացավով տառապող (մարդ)	ревматик (человек)
Richter <i>m</i> -s; - erfahrener ~	դատավոր	судья
richterlich <i>a</i>	փորձառու դատավոր	опытный судья
~e Unabhängigkeit	դատական, դատավորական դատավորի անկախություն	судебный судейская независимость

Richterspruch *m -es; ...sprüche*
Richtlinie *f -; -en*

Riese *m -n; -n*
rigoros *a*
Rigorosum *n -s; Rigorosa*

Rind *n -es; -er*
Ringgrab *n -(e)s; ...gräber*
ringsum *adv*
Ringwall *m -(e)s; ...wälle*

Rippe *f -; -n*

Ritt *m -(e)s; -e*
Ritter *m -s; -*
Rittertum *n -s; ohne pl*

Ritus *m Riten*

Robe *f -; -n*

դատավճիռ
1. դեկլավար հրահանգ՝ ցուցում
2. (ժամանակավոր)
ուսումնական ծրագրեր
հսկա
խիստ, կտրուկ
1. (բանավոր) խիստ քննություն
2. գիտության դոկտորի
աստիճանի քննություն
խոշոր եղջերավոր անասուն
շրջանաձև գերեզման
շուրջբոլորը, ամենուր
օղակաձև պատնեշ՝ պատվար
(ամրոցի)
1. կող, կողամատ
2. ջիղ, երակ (տերևի)
ձիավարում
ասպետ
ասպետություն.
ասպետականություն
ծիսակարգություն, ծես,
արարողություն. հանդիսակարգ
դատավորի պարեզոտ

решение суда, судебное решение
1. директива
2. (временные) учебные
программы
великан, гигант
строгий, жесткий
1. строгий (устный) экзамен
2. экзамен на степень доктора

крупный рогатый скот
кольцевая могила
вокруг, везде
кольцевой вал (крепости)

1. ребро
2. жилка (листа)
поездка верхом
рыцарь
рыцарство

ритуал, обряд; церемония

судейская тога

Rodung *f -; -en*

Roggen *m -s; -*

Rohrkatze *f -; -n*

römisch *a*

Röntgenstrahlen *pl*

Rotationssystem *n -s; -e*

Rotkopfte *f -; -n*

Rübe *f -; -n*

Rücken *m -s; -*

Rückgabe *f -; -n*

Rückgang *m -es; Rückgänge*

rückgängig machen *vt*

Rückgrat *n -(e)s, -e*

er hat ~

Rückkehrer *m -s; -*

Rücklage *f -; -n*

արմատախիլ անելը,

արմատահանում

հաճար, տարեկան

նդեզնակատու

հռմեական

ռենտգենյան ճառագայթներ

փոխատնդումային համակարգ

կարմրագլուխ բադ

շաղգամ. ճակնդեղ

1. մեջք

2. լեռնաշղթա

վերադարձ, հետ դարձնելը, հետ

տալը

անկում, իջեցում. կրճատում,

նվազում

վերաջնել, չեղյալ հայտարարել

1. ողնաշար

2. հիմք

3. բնույթ, բնավորություն

նա խիստ բնավորություն ունի

հայրենադարձ

պահուստ, կուտակում, պաշար

корчевание

рожь

камышовый кот

римский

рентгеновские лучи

система ротации

нырок красноголовый

репа; свёкла

1. спина

2. горный хребет

возвращение, возврат

упадок, спад, снижение;

сокращение, уменьшение

ликвидировать, аннулировать

1. позвоночный столб, спинной

хребет

2. основа

3. характер

у него твёрдый характер

репатриант

накопления, свережения, запас;

денежный резерв

Rückschau *f -; -en*
Rücksicht *f -es; ohne pl*
rücksichtslos *a*

rücksichtsvoll *a*

Rücktritt *m -(e)s; -e*

den ~ einreichen
Rücktrittsgesuch *n -(e)s; -e*
Ruf *m -(e)s; -e*
Ruhegeld *n -(e)s; ohne pl*

ruhen *vi*
Ruhestand *m -es; ohne pl*

im ~ sein
in den ~ treten

հետադարձ հայացք
ակնածանք, ուշադրություն
անխնա, վճռական.
աննրբանկատ, կոպիտ
ուշադիր, նրբանկատ, պատշաճ,
զգայուն, սիրալիր

1. հրաժարում (պայմանագրից)

2. հրաժարում (պաշտոնից),
հրաժարական (կառա-
վարության)

հրաժարական տալ
հրաժարական
վարկ, փառք, համբավ, հռչակ
ծնրության և տարիների
վաստակի թոշակ (պետական
ծառայողների)
հանգստանալ. հանդառնել
պաշտոնաթողություն,
պաշտոնանկություն
թոշակառու լինել
պաշտոնաթող լինել, թոշակի
անցնել

ретроспективный взгляд
почтение, уважение, внимание
беспощадный, решительный;
бесцеремонный, грубый
внимательный, деликатный,
тактичный, чуткий,
предупредительный
1. отказ (от договора),
расторжение (договора)
2. уход (с должности), отставка
(правительства)

подать в отставку
заявление об отставке
репутация, слава
пенсия по старости и за выслугу
лет (государственных служащих
в дополнение к пенсии)
отдыхать; почитать
отставка

быть в отставке
выйти в отставку, на пенсию

ruhmreich <i>a</i>	փառապանծ	славный
ruhmvoll <i>a</i>	հռչակավոր, փառապանծ	славный, прославленный
Ruine <i>f -; -n</i>	ավերակ, փլատակ	руины, развалины
Rundfunk <i>m -s; ohne pl</i>	1. ռադիո	1. радио
	2. ռադիոհաղորդում	2. радиовещание
Rundfunkansager <i>m -s; -</i>	ռադիոհաղորդավար	диктор на радио, диктор радиовещания
Rundfunkanstalt <i>f -; -en</i>	ռադիոկայան	радиостанция
Rundfunkfreiheit <i>f -;</i>	ռադիոհեռարձակման ազատություն	свобода радиовещания
Rundfunkrecht <i>n</i>	ռադիոհեռարձակման իրավունք	право радиовещания
Rundfunksender <i>m -s; -</i>	ռադիոկայան	радиовещательная станция;
	ռադիոհաղորդիչ	радиовещательный передатчик
Rundfunk-und Fernseh- rat <i>m -(e)s; ohne pl</i>	ռադիոյի և հեռուստատեսության խորհուրդ	совет по телевидению и радиовещанию
Rundgang <i>m -(e)s; ...gänge</i>	համայն. շրջագայություն	обход; экскурсия
Rüstung <i>f -; ohne pl</i>	սպառազինում, սպառազինություն	вооружение
Rüstungsbetrieb <i>m -(e)s; -e</i>	ռազմական հիմնարկություն	военное предприятие

S s

Sachkenntnis *f -; ohne pl*

Sachkommission *f -; -en*
syn. Expertkommission f

sachkundig *a*

Sachlichkeit *f -; ohne pl*

Sachse *m -n; -n*

sächsisch *a*

sachverständig *a*

adv

Sachverständige *m -n; -n*

Sachverständigengutachten *n - s; -*

sägen *vt*

գործիմացություն,
իրազեկություն, հմտություն,
տեղյակություն
փորձագետների հանձնաժողով

իրազեկ, տեղյակ
1. գործիմացություն
2. նպատակահարմարություն
3. իրայնություն
4. ռեալություն, օբյեկտիվություն
5. կոնստրուկտիվիզմ
սաքսոնացի
սաքսոնական
գործիմաց, գործի միացող,
ձեռնհաս
գործիմացորեն, վարպետորեն,
բանիմացորեն
փորձագետ
փորձագիտական
եզրակացություն, փորձագետի
եզրակացություն
սղոցել

знание дела, компетентность,
осведомлённость

экспертная комиссия

сведущий, компетентный
1. деловитость
2. целесообразность
3. вещественность
4. реальность, объективность
5. конструктивизм
саксонец
саксонский
знающий дело, компетентный
со знанием дела,
профессионально

эксперт
экспертное заключение,
заключение эксперта

пилить

sagenhaft <i>a</i>	հեքիաթային, առասպելական	сказочный, легендарный, мифический
Saite <i>f -; -n</i>	լար	струна
säkularisieren <i>vt</i>	աշխարհականացնել. բռնագրավել	секуляризировать; конфисковать
Salat <i>m -(e)s; -e</i>	աղցան, սալաթ	салат
Salbbüchse <i>f -; -n</i>	քուրքի անոթ	сосуд для мази
Salzkraut <i>n -es; ohne pl</i>	աղածաղիկ	солянка
Sammellager <i>n -s; -</i>	համակենտրոնացման ճամբար	концентрационный лагерь
Sammler <i>m -s; -</i>	հավաքածու ունեցող, կոլեկցիոներ	собиратель, коллекционер
Sammlung <i>f -; -en</i>	հավաքածու. ժողովածու	коллекция; сборник
sämtlich <i>a</i>	բոլորը (առանց բացառության)	все (без исключения)
Sandbahn <i>f -; -en</i>	ավազաճանապարհ, ավազուղի	песчаный путь, дорога
Sandsteinfels <i>m -ens; -en</i>	ավազաքարային ժայռ	песчаный утёс
Sandstrand <i>m -es; ...strände</i>	ավազե լողափ, ծովափ	песчаный пляж
sanft <i>a</i>	հեղ, մեղմ, քնքուշ, հլու	мягкий, нежный, кроткий
Sassaniden <i>pl</i>	Սասանյան դինաստիա	династия Сасанидов
Satellit <i>m -en; -en</i>	արբանյակ	спутник
Satellitenstadt <i>f -; ...städte</i>	քաղաք-արբանյակ	город-спутник (сателлит)
Satrapie <i>f -; -n</i>	սատրապություն (Արեմենյան Պարսկաստանի վարչական միավոր)	сатрапия (административная единица в Ахеменидском Иране)
Satzung <i>f -; -en</i>	կանոնադրություն	положение

Säugetier *n* -(e)s; -e

Säule *f* -; -n

Säulenhalle *f* -; -n

Saum *m* -(e)s; *Säume*

säurebeständig *a*

Schädel *m* -s; -

Schadensersatz *m* -es; *ohne pl*

Schadensersatzpflicht *f* -; -en

schädigen *vt*

Schaf *n* -es; -e

Schafbock *m* -(e)s; ...böcke

syn. Hammel m

Schaffen *n* -s; *ohne pl*

schaffen *vt*

j-m viel zu ~ machen

Schakal *m* -es; -e

կաթնասուն

1. սյուն

2. կոթող

սյունասարահ, սյունազարդ

դահլիճ

եզր, շրջակարվածք (զգեստի)

թթվակայուն

գանգ

վնասի հատուցում

վնասի հատուցման

պարտականություն

վնաս հասցնել, վնասել

ռչխար

խոյ

1. ստեղծում,

ստեղծագործություն

2. գործ, երկ. աշխատանք

1. ստեղծել, ստեղծագործել

2. աշխատել

մեկին շատ գլխացավանք

պատճառել

շնագայլ

млекопитающее

1. колонна, столб

2. столп

колонный зал

кайма, обшивка, кромка

(одежды)

кислотостойкий

череп

оплата ущерба

обязанность возмещения ущерба

нанести ущерб

овца

баран

1. созидание, творчество

2. произведение, труд; работа

1. творить, создавать

2. работать

доставлять кому-л. много хлопот

шакал

Schale *f -; -n*

Schärfe *f -; ohne pl*

Schatten *m -s; -*

schattenwerfend *a*

Schatz *m -es; Schätze*

schätzen *vt*

Schatzkanzler *m -s; -*

Schauplatz *m -es; ...plätze*

Scheidung *f -; -en*

scheinen (*schien, geschienen*) *vi*

Scheiterhaufen *m -s; -*

Schicht *f -; -en*

die Gesellschafts~

Schiffbau *m -s; ohne pl*

զավաթ, թաս

1. սրություն

2. բարկություն, թնդություն
(օղու)

3. խստություն

4. ցայտունություն

1. ստվեր

2. ուրվական

ստվերող, ստվեր գցող

զանձ, հարստություն

զնահատել. հարգել

զանձապետ

գործողության վայր,

թատերաբեմ

ամուսնալուծություն,

ապահարգան

1. փայլել, շողալ

2. թվալ, երևալ

խարույկ

1. շերտ, խավ

2. հերթափոխ

հասարակության խավ

նավաշինություն

чаша

1. острота

2. крепость (водки)

3. строгость

4. резкость

1. тень

2. призрак

бросающий тень

сокровище, богатство

ценить; уважать

казначей

место действия, арена

развод

1. светить, сиять

2. казаться

костёр

1. слой, пласт

2. смена

слой общества, общественный

слой

судостроение

Schild <i>m -es; -e</i>	վահան. թիրախավահան	щит
Schild <i>n -es; -er</i>	ցուցանակ. ցուցատախտակ	табличка; вывеска
schildern <i>vt</i>	նկարագրել, պատկերել	описывать, изображать
Schilderung <i>f -; -en</i>	նկարագրություն, պատկերում.	описание, изображение;
	բնութագրում	характеристика
Schilf <i>n -(e)s; -e</i>	եղեգն, եղեգնուտ	тростник, камыш
Schlacht <i>f -; -en</i>	ճակատամարտ	битва
Schlamm <i>m -(e)s; Schlämme</i>	տիղմ	ил
Schlange <i>f -; -n</i>	1. օձ	1. змея
	2. հերթ	2. очередь
schlau <i>a</i>	խորամանկ	хитрый
Schleier <i>m -s; -</i>	քող, շղարշ, ծածկոց	вуаль, покрывало, фата, чадра;
		пелена
Schleierfahndung <i>f -; -en</i>	որոնում, հետապնդում,	розыск, преследование,
	հետախուզում	выслеживание
Schleife <i>f -; -n</i>	1. կապ. ժապավեն	1. бант; лента
	2. թակարդ, ծուղակ (թռչունների համար)	2. силоч, капкан (для птиц)
schlicht <i>a</i>	3. սահնակ	3. полозья, сани
Schlichtheit <i>f -; ohne pl</i>	պարզ, համեստ	простой, скромный
Schlichtungskommission <i>f -; -en</i>	պարզություն, համեստություն	простота, скромность
schließen (schloss, geschlos- sen) <i>vt</i>	հաշտարար հանձնաժողով	согласительная комиссия
	1. փակել. կողպել	1. закрывать; запирать
	2. վերջացնել, ավարտել	2. кончать, завершать

Schließung *f -; ohne pl*

Schloss *n -es; Schlösser*

Schlosskirche *f -; -n*

Schlossturm *m -(e)s; ...türme*

Schlot *m -(e)s; -e*

Schlucht *f -; -en*

Schlüssel *m -s; -*

Schlüsselement *n -es; -e*

Schlüsselstellung *f -; ohne pl*

schlussfolgernd *a*

Schlusswort *n -(e)s; -e*

schmal *a*

~ lächeln

Schmelz *m -es; -e*

Schmerz *m -es; -en*

Schmerzensgeld *n -es;*

1. փակում

2. ավարտ, վերջ

1. ամրոց, դղյակ, պալատ

2. կողպեք, փականք

պալատական եկեղեցի

պալատական աշտարակ

ծխնելույզ (գործարանի)

կիրճ

1. բանալի

2. ծածկագիր

գլխավոր տարր

վճռորոշ դիրք

ընդհանրացնելով, ամփոփելով,

ի մի բերելով

վերջին խոսք, եզրափակման

խոսք, ավարտաճառ

նեղ. բարակ, նիհար

թեթևակի ժպտալ

1. արծն, արծնապակի

2. էմալ

ցավ, տառապանք, վիշտ

պատճառոված մարմնական

վնասվածքի դրամական

հատուցում, հատուցագին

1. закрытие

2. окончание, конец

1. замок, дворец

2. замок

дворцовая церковь

дворцовая башня

дымовая труба (фабричная)

ущелье

1. ключ

2. ключ, код

главный элемент

ключевая позиция

обобщая, суммируя

заключительное слово

узкий; тонкий, худой

слегка улыбнуться

1. глазурь

2. эмаль

боль, страдание, скорбь

денежное возмещение за

причинение телесного

повреждения

Schmerzmittel *n* -; -

Schmetterling *m* -es; -e

schmieden *vt*

schmücken *vt*

Schmuckstück *n* -es; ...stücke

Schneeball *m* -(e)s; ...bälle

Schneeleopard *m* -es; -en

Schneesmelze *f* -; -n

Schnittpunkt *m* -(e)s; -e

Schnörkel *m* -s; -

Schöffe *m* -n; -n

Schöpfer *m* -s; -

schöpferisch *a*

Schöpfung *f* -; -en

die ganze ~

die ~ der Erde

schräg *a*

Schräge *f* -; -n

ցավազրկող միջոց

թիթև

կռել, կռփել

զարդարել

զարդ, զարդարանք. գոհարնդեն

ձյունագնդակ, ձնագնդիկ

ձյունաթույր ընձառյուծ

ձնհալք, ձնհալոցք

հատման կետ

պարուրազարդ, ոլորազարդ

ատենակալ (դատական)

ստեղծող, ստեղծագործող.

հեղինակ

ստեղծագործական

1. կերտում, ստեղծում,

ստեղծագործում

2. ստեղծագործություն, երկ

ամբողջ աշխարհը

աշխարհի ստեղծումը՝

արարումը

շեղ, ծուռ, թեք, կոր

1. թեքություն

2. անկյունագիծ. կորագիծ,

շեղագիծ

болеутоляющее средство

бабочка

ковать

украшать

украшение; драгоценность

снежный ком, снежок

белоснежный леопард

снеготаяние

точка пересечения

завиток; витиеватость

заседатель (судебный)

творец, создатель; автор

творческий

1. творение, созидание

2. творение, произведение

весь мир

сотворение мира

косой, наклонный

1. наклон, уклон

2. диагональ; косая линия

schrägen *vt*

Schrift *f -; -en*

schriftlich *a*

Schriftmuseum *n -s; ...museen*

Schriftsteller *m -s; -*

Schriftzeugnis *n -ses; -se*

Schritt *m -es; -e*

~ halten

schrittweise *adv*

Schrumpfung *f -; -en*

Schuld *f -; ohne pl*

schwere ~

Schuldanteil *m -(e)s; -e*

Schuldfähigkeit *f -; ohne pl*

Schuldhaftigkeit *f -;*

Schuleignungstest *m -(e)s; -s*

1. ծռել, շեղել, թնքել

2. շրջանցել

1. գիր, տառ, տպատառ

2. գիր, գրություն

3. ձեռագիր

գրավոր

ձեռագրերի թանգարան,

մատենադարան

գրող. բանաստեղծ, պոետ

գրավոր վկայություն

քայլ

համաքայլ գնալ, հետ չմնալ

քայլ առ քայլ. աստիճանաբար

կրճատում, կրճատվելը

(արտադրանքի)

պարտք, պարտավորություններ

ծանր մեղք

մեղքի մաս՝ բաժին

մեղսունակություն

մեղավորություն

դարձակաճ կրթությանը

ախտանելիության ստուգում

1. скашивать

2. обходить

1. шрифт, буква

2. письмо, письменный текст

3. почерк

письменный

музей рукописей

писатель; поэт

письменное свидетельство

шаг

идти в ногу, не отставать

шаг за шагом; постепенно

сокращение, свёртывание

(производства)

долг, обязательство

тяжелая вина

совиновничество, доля вины

вменяемость

виновность

проверка пригодности к

школьному обучению

Schulpflicht <i>f -;</i> allgemeine ~	պարտադիր ուսուցում համընդհանուր պարտադիր ուսուցում	обязательное обучение всеобщее обязательное обучение
Schulpolitik <i>f -; ohne pl</i>	դպրոցական (կրթական) քաղաքականություն դպրոցական՝ աշակերտական պայուսակ	школьная (образовательная) политика школьная сумка (ранец)
Schulranzen <i>m -s; -</i>	ուսումնական ծրագիր դպրոցական գործ, դպրոցավարություն փլվածք. աղբ, թափոն (շինարարական)	учебная программа школьное дело, школьное образование развалины; мусор (строительный)
Schulungsprogramm <i>n -es; -e</i>	պաշտպանություն պաշտպանել	защита защищать
Schulwesen <i>n -s; ohne pl</i>	սուրբ հովանավոր 1. թուլություն 2. թերություն	святой заступник, покровитель 1. слабость 2. недостаток
Schutt <i>m -es; ohne pl</i>	ծիծեռնակ մի ծիծեռնակով գարուն չի գա	ласточка одна ласточка весны не делает
Schutz <i>m -es; ohne pl</i> ~ leisten	սպունգանման կարապ	губчатый лебедь
Schutzpatron <i>m -s; -e</i>	հղիության նպաստ	посовие по беременности
Schwäche <i>f -; -n</i>	սև կավի թերթաքար	чёрный глинистый сланец
Schwalbe <i>f -; -n</i> eine ~ macht noch keinen Sommer		
schwammig <i>a</i>		
Schwan <i>m -(e)s; Schwäne</i>		
Schwangerenbeihilfe <i>f -; -n</i>		
Schwarzschiefer <i>m -s; -</i>		

Schwarzwild *n -es; ohne pl*

Schwebebahn *f -; -en*

schwebend *a*

Schwefel *m -s;*

schwefelhaltig *a*

Schwerpunkt *m -es; -e*

Schwert *n -(e)s; -er*

Schwiegersohn *m -(e)s; ...söhne*

Schwindler *m -es; -*

Schwur *m -(e)s; Schwüre*

Schwurgericht *n -es; -e*

Sediment *n -(e)s; -e*

Sedimentablagerung *f -; -en*

sedimentogen *vt*

See *f -; ohne pl*

See *m -s; -n*

seewärts *adv*

Seewirtschaft *f -; ohne pl*

Segel *n -s; -*

mit vollen ~n fahren

վարագ

կախովի երկաթուղի

ճախրող

ծծումբ

ծծումբ պարունակող,

ծծմբակիր

1. ծանրության կենտրոն

2. հիմնական օղակ, էություն.

ամենակարևորը, հիմնական

սուր, սուսեր, թուր

փնսա

խաբերա

երդում

երդվյալների դատարան

նստվածք. շերտ

նստվածքային շերտախումբ

նստվածքային (ապար)

ծով

լիճ

դեպի ծովը, ծովի ուղղությամբ

ծովային տնտեսություն

առագաստ

բոլոր առագաստները պարզած

նավարկել

чёрная дичь (кабаны)

подвесная железная дорога

парящий

сера

содержащий серу

1. центр тяжести

2. суть, сущность; главная

задача, основное звено, ядро

меч

зять

мошенник

клятва

суд присяжных

осадок; отложение

осадочное отложение

осадочный

море

озеро

(по направлению) к морю

морское хозяйство

парус

идти на всех парусах

die ~ hissen	առագաստները պարզել	поднять паруса
Segler <i>m -s; -</i>	ջրածիժառ	стриж
sehenswert <i>a</i>	տեսարժան	достопримечательный
seicht <i>a</i>	ծանծաղ, մակերեսային	мелководный, поверхностный
Seitenflügel <i>m -s; -</i>	թևաշենք, կողաշենք,	флигель, крыло здания
	կցակառույց	
Sekundarschule <i>f -; -n</i>	երկրորդ աստիճանի դպրոց (7-10-րդ դասարան ԳԴՀ-ում)	школа второй ступени (7-10 классы в ФРГ)
selbstbewusst <i>a</i>	ինքնավստահ	самоуверенный, самонадеянный
Selbstbewusstsein <i>n -s; ohne pl</i>	1. արժանապատվություն. ինքնասիրություն	1. чувство собственного достоинства; самосознание
	2. ինքնավստահություն	2. самоуверенность
Selbstbildnis <i>n -ses; -se</i>	ինքնանկար	автопортрет
Selbsteinschätzung <i>f -; -en</i>	ինքնագնահատում	самооценка
selbstlos <i>a</i>	ինքնամոռաց	самоотверженный
Selbstmord <i>m -(e)s; -e</i>	ինքնասպանություն	самоубийство, суицид
~ begehen	ինքնասպանությամբ կյանքին վերջ տալ	покончить жизнь самоубийством
selbstvergessen <i>a</i>	ինքնամոռաց, ինքնագոհ, անձնուրաց	самозабвенный, самоотверженный
Selbstverwaltung <i>f -; ohne pl</i>	ինքնակառավարում	самоуправление
Selbstzucht <i>f -; ohne pl</i>	ինքնակարգապահություն	самодисциплина
Selen <i>n</i>	սելեն	селен (химический знак)
selten <i>a</i>	հազվագյուտ	редкий

Sender *m -s; -*

Sendereihe *f -; -n*
senken *vt*

Serienerzeugnis *n -ses; -se*
Sessel *m -s; -*
sesshaft *a*
setzen *vt*

Seuche *f -; -n*
Sewanbecken *n -s; ohne pl*
Sicherheit *f -; -en*

internationale ~
Sicherheitsvereinbarung *f -; -en*

Sicherheitsvertrag *m -(e)s; ...verträge*
sichtbar *a*
siebenjährig *a*
Siebenschläfer *m -s; -*

1. հաղորդիչ ռադիոկայան
2. հաղորդիչ, փոխանցիչ, հաղորդող սարքավորում
հաղորդաշար (ռադիո, հեռուստ.)
իջեցնել, նվազեցնել (գները) .
խոնարհել (աչքերը)
սերիական արտադրանք
բազկաթոռ
նստակյաց
1. տնկել
2. դնել
3. նստեցնել
համաճարակ
Սևանի ավազան
1. ապահովություն
2. համոզվածություն
միջազգային անվտանգություն
անվտանգության
համաձայնագիր
անվտանգության
պայմանագիր
երևացող, տեսանելի. ակնհայտ
յոթամյա
1. քնամուկ

1. радиостанция (передающая)
2. передатчик (радио),
передающее устройство
цикл передач (радио, телев.)
снизить (цены); опускать (глаза)

серийная продукция
кресло
оседлый
1. сажать
2. поставить
3. посадить
эпидемия
бассейн озера Севан
1. безопасность
2. уверенность
международная безопасность
соглашение о безопасности

договор безопасности

видимый, явный
семилетний
1. соня-полчок

Siedlung *f -; -en*
Siedlungsraum *m -s; ...räume*
Sieg *m -es; -e*
Siegelbewahrer *m -s; -*
Siegesgöttin *f -; -nen*
siegreich *a*
Signet *n -(e)s; -e und -s*
signieren *vt*

Signum *n -s; Signa*

Silhouette *f -; -n*
simultan *a*

singend *a*

sinken (sank, gesunken) *vt*

Sinn *m -es; -e*

2. քնամոլ (մարդ)
 ավան
 քնակավայր
 հաղթանակ
 կնիքապահ
 հաղթանակի աստվածուհի
 հաղթական
 կնիք, դրոշմ
 ստորագրել. նշան անել.
 մակագրել

1. ստորագրություն (կրճատ.)

2. նշան, պիտակ
 ուրվապատկեր, ուրվանկար

1. միաժամանակյա

2. ընդհանուր

1. երգեցիկ

2. երգող

3. երգելով

ընկնել, նվազել. սուզվել,

ընկղմվել

1. իմաստ, նշանակություն

2. գիտակցություն, միտք

3. ունակություն

2. соня
 посёлок
 местожительство
 победа
 хранитель печати
 богиня победы
 победоносный
 печать, штампель
 подписывать, делать надпись

1. подпись; (сокращённая)

параф

2. знак, ярлык

силуэт, очертание

1. одновременный

2. общий

1. певучий

2. поющий

3. нараспев

упасть, убавляться; погружаться,

погрузиться

1. смысл, значение

2. сознание, разум, помысел

3. склонность

sinnlos *a*

Sintflut *f -; -en*

Situation *f -; -en*

Sitz *m -es; -e*

der ~ der Regierung

Sitzplatz *m -es; ...plätze*

Sitzung *f -; -en*

Sklavenhaltergesellschaft *f -;*

ohne pl

Skorpion *m -s; -e*

Skythe *m -n; -n*

Slogan *m -s; -s*

Sockel *m -s; -*

Solidarität *f -;*

Soloinstrument *n -(e)s; -e*

Sonderschule *f -; -n*

Sondersteuer *f -; -n*

Sorgerecht *n -es; ohne pl*

Sorgfalt *f -; ohne pl*

անիմաստ

ջրհեղեղ

իրավիճակ, իրադրություն

1. նստավայր

2. բնակավայր

կառավարության նստավայր

նստելու տեղ

նիստ

ստրկատիրական

հասարակարգ

կարիճ

սկյութ

կոչ, կանչ, լոզունգ, կարգախոս,

նշանաբան (նաև գովազդային)

գեոմետրիա

համերաշխություն

մենամական սոլո գործիք

հանրակրթական հատուկ

դպրոց

հատուկ հարկ

ծնողական խնամակալության

իրավունք, ծնողական իրավունք

մանրագնություն, հոգատա-

րություն, ջանադիրություն

бессмысленный

наводнение, потоп

ситуация, обстановка

1. резиденция

2. место жительства

резиденция правительства

место для сидения

заседание

рабовладельческое общество

скорпион

скиф

клич, призыв, лозунг (также

рекламный)

цоколь

солидарность

сольный инструмент

специальная

общеобразовательная школа

специальный налог

право родительской опеки,

родительские права

тщательность, заботливость

Sorgfaltspflicht *f -; ohne pl*

sorgsam *a*

Sorgsamkeit *f -; ohne pl*

souverän *a*

Sozialabgaben *pl*

Sozialfonds *m -; -*

Sozialgesetzgebung *f -; ohne pl*

Sozialhilfe *f -;*

Sozialkarte *f -; -n*

Sozialleistung *f -; -en*

Sozialpolitik *f -; -en*

Sozialrecht *n -(e)s; -e*

Sozialstaat *m -(e)s; -en*

Sozialunterstützung *f -; ohne pl*

Sozialversicherung *f -; -en*

1. բարեխղճություն
ցուցաբերելու
պարտականություն
2. առևտրային գործընկերոջ
շահերը պաշտպանելու
պարտականություն
հոգատար, խնամքով
հոգատարություն, խնամք
ինքնիշխան, անկախ
սոցիալական հատկացումներ,
վճարումներ
սոցիալական ֆոնդ
սոցիալական օրենսդրություն
սոցիալական օգնություն
սոցիալական քարտ
սոցիալական նպաստ
սոցիալական
քաղաքականություն
սոցիալական իրավունք
սոցիալական պետություն
սոցիալական ապահովության
նպաստ
սոցիալական
ապահովագրություն

1. обязанность проявлять
добросовестность

2. обязанность соблюдать
интересы торгового партнёра

тщательный, заботливый
тщательность, заботливость
суверенный, независимый
расходы по социальному
страхованию
социальный фонд
социальное законодательство
социальная помощь
социальная карта
социальное пособие
социальная политика

социальное право
социальное государство
пособие по социальному
страхованию
социальное страхование

Sozialversicherungsanstalt *f -; -en*

Sozialwesen *n -s; -*

Sparbuch *n -(e)s; ...bücher*

Spareinlage *f -; -n*

sparen *vt und vi*

Sparer *m -s; -*

Sparkasse *f -; -n*

sparsam *a*

spät *a*

spätgotisch *a*

Specht *m -(e)s; -e*

Speisekarte *f -; -n*

spekulieren *vi*

Spende *f -; -n*

spenden *vt*

Spender *m -s; -*

Sperrmauer *f -; -n*

սոցիալական ապահովության
մարմին՝ հիմնարկ

սոցիալական ապահովության
համակարգ

խնայգրքայի

ավանդ

խնայել, կուտակել

1. ներդնող, ավանդատու

2. խնայող (մարդ)

խնայողքամարկդ

խնայող

ուշ

ուշ գոթական

փայտփորիկ, ծառկուտուտ

ճաշացուցակ, կերակրացուցակ

1. չարաշահել, չարաշահություն
անել

2. վերացականորեն մտածել

նվիրատվություն

նվիրել, տալ

նվիրաբերող, բարերար,

նվիրատու

ամբարտակ

учреждение по социальному
страхованию

система социального
обеспечения

сберегательная книжка

вклад

экономить, копить

1. вкладчик

2. бережливый (человек)

сберегательная касса

бережливый, экономный

поздний

позднеготический

дятел

меню (подбор и карта блюд)

1. спекулировать,
эксплуатировать

2. философствовать, мыслить
отвлечённо

пожертвование

дарить, давать

даритель, жертвователь

плотина

spiegelbildlich *a*
spiegeln *vt*
Spielplan *m* *-(e)s; ...pläne*
Spielraum *m* *-(e)s; ...räume*

Spinne *f* *-; -n*
Spitze *f* *-; -n*

an der ~
Spitzenorganisation *f* *-; -en*

Spitzenstellung *f* *-; -en*
Sportfest *n* *-(e)s; -e*
Sportforum *n* *-s; ...foren oder ...fora*
Sportpädagogik *f* *-; ohne pl*

Spott *m* *-(e)s; ohne pl*
 mit j-m ~ treiben
 sich zum ~ machen
spöttisch *a*
Sprecher *m* *-s; -*

սիմետրիկ
 փայլել, շողալ, արտացոլել
 խաղացանկ
 1. խաղասարահ, խաղադաշտ
 2. ազատ գործունեություն
 սարդ
 1. ծայր
 2. գագաթ
 ժանյակ
 գլխավորությամբ
 բարձրագույն աստիճան. ղեկավար
 մարմին. գլխավոր վարչություն
 առաջավոր դիրք՝ տեղ
 մարզաշքերթ
 մարզահամալիր

սպորտային
 մանկավարժություն
 ծաղր, հեգնանք

մեկին ծաղրել
 ծաղրի առարկա դառնալ
 ծաղրաբար, հեգնաբար
 1. խոսնակ, հռետոր

симметричный
 сверкать, сиять, отсвечивать
 репертуар, программа
 1. место, площадка для игры
 2. свобода действий
 паук
 1. кончик
 2. вершина
 кружево
 во главе
 высшая инстанция; руководящая
 организация; главное управление
 ведущее место
 спортивный парад
 спортивный комплекс
 спортивная педагогика
 насмешка, ирония,
 издевательство
 поднимать на смех кого-л.,
 сделаться посмешищем
 насмешливо
 1. спикер, оратор

sprengen *vt*
sprunghaft *a*

Spur *f -; -en*
keine ~

spürbar *a*

spüren *vt*
spurlos *a, adv*

Staat *m -(e)s; -en*

Staatenbund *m -(e)s; ...bünde*

Staatsangehörigkeit *f -; -en*

Staatsangehörigkeits-
recht *n -(e)s; ohne pl*

Staatsanwalt *m -(e)s; ...anwälte*

Staatsbürgerschaft *f -; -*

Staatseigentum *n -s; ohne pl*

Staatsform *f -; -en*

2. խոսող, հաղորդավար
(ռադիո). մեկնաբան

3. զեկուցող
պայթեցնել

1. կտրուկ

2. անհավասար

3. հանկարծակի
հետք

բնավ, ամենևին

զգալի

զգալ, իմանալ, հոտ առնել
անհետ

պետություն

կոնֆեդերացիա

քաղաքացիություն

քաղաքացիության իրավունքը

կարգավորող իրավական

նորմերի համակցություն

դատախազ

քաղաքացիություն,

հպատակություն

պետական սեփականություն

պետության ձև (պետական

կառավարման ձև, պետական

2. диктор (радио); комментатор

3. докладчик

взрывать, взорвать

1. резкий

2. неровный

3. внезапный

след

ничего подобного

ощутимый

чувствовать, чують

бесследный, бесследно

государство

конфедерация, союз государств

гражданство

совокупность правовых норм,

регулирующих вопросы

гражданства

прокурор

гражданство, подданство

государственная собственность

форма государства (форма

государственного управления,

demokratische ~	կառուցվացքի ձև և պնտական վարչաձև)	государственного устройства и государственного режима)
republikanische ~	ժողովրդավարական վարչաձև	демократическая форма правления государством
Staatsgeheimnis <i>n -ses; -se</i>	պնտական գաղտնիք	государственная тайна
Staatsgewalt <i>f -; ohne pl</i> <i>syn. Staatsmacht f</i>	պնտական իշխանություն	государственная власть
Staatshaushalt <i>m -es; ohne pl</i>	պնտական բյուջե	государственный бюджет
Staatsoberhaupt <i>n -(e)s;</i> <i>...häupte</i>	պնտության գլուխ՝ ղեկավար	глава государства
Staatsrecht <i>n -es; -e</i>	պնտական իրավունք	государственное право
Staatsverbrechen <i>n -s; -</i>	պնտական հանցագործություն	государственное преступление
Staatsverschuldung <i>f -;</i>	պնտական պարտք	государственная задолженность
Stachel <i>m -s; -n</i>	1. փուշ 2. խայթ (մեղվի)	1. колючка; шип, игла 2. жало (пчелы)
Stachelbeere <i>f -; -n</i>	հաղարջ	крыжовник
Stadtbefestigung <i>f -; -en</i>	քաղաքի ամրացում	укрепление города
städtebaulich <i>a</i>	քաղաքաշինական	градостроительный
Stadtgraben <i>m -s; ...gräben</i>	շրջանցիկ քաղաքային խանդակ՝ խրամ	обводный городской ров
Stadtkern <i>m -s; -e</i>	քաղաքի կենտրոն	центр города
Stadtkommandant <i>m -en; -en</i>	քաղաքի պարեն	комендант города

Stadtstrand *m -es; ohne pl*
Stadtrecht *n -(e)s; ohne pl*
Stadtstaat *m -(e)s; -en*
Stadttor *n -es; -e*
Stadtverwaltung *f -; -en*
Stahl *m -(e)s; Stähle*

Stahlerzeugung *f -; ohne pl*

stammen *vi (aus D)*
(von D)

Standard *m -es; -s*
standardisieren *vt*
standhaft *a*
ständig *a*

Standort *m -(e)s; -e*
Statistik *f -; -en*
Statistiker *m -s; -*
Stätte *f -; -n*
stattfinden (fand statt, stattgefunden) *vi*

քաղաքի մերձակայք
 քաղաքի կարգավիճակ
 քաղաք-պետություն
 քաղաքի դարպաս
 քաղաքային ինքնավարություն
 1. պողպատ
 2. կտրիչ
 1. պողպատի արտադրություն
 2. արտադրանք՝
 պատրաստված պողպատից
 սերնի, ելնել
 պատկանել (հեղինակին)
 նորմ, ստանդարտ, չափանիշ
 ստանդարտավորել
 տոկուն
 մշտական, հարատև, կայուն

տեղավայր
 վիճակագրություն
 վիճակագիր
 վայր, տեղ
 տեղի ունենալ

городская окраина
 статус города
 государство-город
 городские ворота
 городское самоуправление
 1. сталь
 2. резец
 1. производство стали
 2. продукция из стали

(про)исходить
 принадлежать автору
 норма, стандарт, мера
 стандартизировать
 стойкий
 постоянный, длительный
 стабильный, неизменный
 местоположение
 статистика
 статистик
 место
 происходить

stattgeben (gab statt, stattgegeben) *vt*

Statuette *f -; -n*

Stau *m -s; -s*

Staubecken *n -s; -*

Staudamm *m -(e)s; ...dämme*

Stausee *m -s; -n*

steigen (stieg, ist gestiegen) *vt*

steigern *vt*

Steigerung *f -; -en*

steil *a*

steilwandig *a*

Steinbruch *m -es; ...brüche*

Steingerät *n -(e)s; -e*

Steinzeit *f -; ohne pl*

Stelldichein *n -s; ohne pl*

Stelle *f -; -n*

բավարարնլ, կատարնլ

արձանիկ

1. բարձրացում (ջրի)

2. կուտակում. խցանում

(ճանապարհային

երթևեկության)

ջրամբար, ջրավազան

ամբարտակ, պատնեշ

խոշոր ջրամբար

1. աճել, ավելանալ

2. բարձրանալ

բարձրացնել, ուժեղացնել

բարձրացում, վերնլք.

ուժեղացում

զառիվեր, դիր

զառիթափ

քարհանք

քարն գործիք

քարն դար

ժամադրություն

վայր, տեղ

удовлетворять, исполнять

статуэтка

1. подпор (воды)

2. скопление; пробка (дорожного движения)

водохранилище, бассейн, водоём
плотина

крупное водохранилище

1. расти, увеличиваться

2. подниматься

повышать, увеличивать

повышение, подъём; усиление

крутой

крутостенный

каменоломня

каменный инструмент

каменный век

свидание

место

stellen *vt*
etw. (A) j-m zur Verfügung ~

Stellung *f -; -en*

eine ~ antreten

j-n seiner ~ entheben

gegen etw. (A) ~ nehmen

~ nehmen zu (D)

eine herausgehobene ~ ein-
nehmen

Stellungnahme *f -; -n*

stellvertretend *a*

Stellvertreter *m -s; -*

Stelzvogel *m -s; ...vögel*

Steppe *f -; -n*

դնել, կանգնեցնել
ինչ-որ բան ինչ-որ մեկի
տարամադրության տակ դնել
1. դիրք, տեղ
2. տեղ, պաշտոն
3. տեսակետ, դիրքորոշում
պաշտոն ստանձնել, պաշտոնի
անցնել
մեկին ազատել զբաղեցրած
պաշտոնից
դնւմ արտահայտվել

որոշակի դիրք գրավել,
հայտնել իր կարծիքը
վերադիր՝ ընդգծված դիրք
գրավել
դիրք, դիրքորոշում,
վերաբերմունք. կարծիք,
տեսակետ
փոխարինող
տեղակալ
պոչխաղուկ, պոչզգուկ
տափաստան

ставить, поставить
предоставить что-л. в чьё-л.
распоряжение
1. место, положение
2. должность, место
3. точка зрения, позиция
вступить в должность

освободить кого-л. от
занимаемой должности
высказаться, выступить против
чего-л.
занять определённую позицию,
высказать своё мнение
занять подчёркнутую позицию

позиция, отношение; мнение,
точка зрения

заменяющий
заместитель
трясогузка
степь

Steppenvegetation *f -; -en*

Sterbegeld *n -es; -en*

sterben (starb, gestorben) *vi*
sternförmig *a*
stetig *a*

Steuer *f -; -n*

Besoldungs~

Ertrags~

indirekte ~

Mehrwert~

sonstige ~*n*

~gesetzgebung

~organe

~verwaltung

Steuerberater *m -s; -*

Steuerdruck *m -(e)s; ohne pl*

steuerfrei *a*

Steuergesetz *n -es; -e*

տափաստանային
բուսականություն

1. հուղարկավորման նպաստ

2. հուղարկավորման համար
տնտեսած դրամ

մեռնել, մահանալ

աստղաձև, աստղանման

մշտական, կայուն, հարատև.

անընդմեջ

հարկ, տուրք

եկամտահարկ

շահութահարկ

անուղղակի հարկ, տուրք

ավելացված արժեքի հարկ

այլ հարկեր

հարկային օրենսդրություն

կառավարման մարմիններ

հարկային վարչարարություն

հարկային հարցերով

խորհրդատու

հարկային ճնշում

հարկերից ազատ

հարկային օրենք

степная растительность

1. пособие на похороны

2. свережения для похорон

умирать; скончаться

звездообразный, звёздчатый

постоянный, устойчивый;

непрерывный

налог, пошлина

подходный налог

налог на доход

косвенный налог

налог на добавленную стоимость

прочие налоги

налоговое законодательство

органы управления

налоговое администрирование

налоговый консультант,

консультант по налоговым по

вопросам

налоговый гнёт

не облагаемый налогом

налоговый закон

steuern *vt*

Steuerrecht *n -es; ohne pl*

Steuersatz *m -es; ...sätze*

Steuerung *f -; ohne pl*

Steuerzahler *m -s; -*

Stibium *n*

Stich *m -es; -e*

Stichwort *n -es; Stichwörter*

Stiefmutter *f -;*

Stift *m -(e)s; -e*

Stift *n -es; -e*

Stifter *m -s; -*

Stiftung *f -; -en*

still *a*

Stilleben *n -s; -*

Stimme *f -; -n*

ղեկավարել, վարել, ուղղորդել

հարկային իրավունք

հարկադրույք, հարկի չափը

1. ղեկավարում, կառավարում

2. ղեկավարման համակարգ

հարկատու

անտիմոն, ծարիր, ծարրաքար

փորագրություն

զլլաբառ

խորթ մայր

1. երիթակ, գամիկ, բույթ

2. մատիտ, քարեգրիչ

1. ապաստան, ծերանոց.

անկեղանոց

2. վանք

հիմնադիր

1. հիմնադրում

2. հաստատություն

3. հիմնադրամ.

նվիրաբերություն

հանգիստ, լուռ

նատյուրմորտ

1. ձայն

2. ձայնի իրավունք

управлять, править, направлять

налоговое право

размер налога, налоговая квота

1. управление, регулирование

2. система регулирования

налогоплательщик

антимон, сурьма

эстамп, гравюра

заглавное слово

мачеха

1. штифт, штырь, палец

2. карандаш, грифель

1. приют для престарелых;

богательня

2. монастырь

основатель

1. основание

2. учреждение

3. фонд; пожертвование

спокойный, тихий

натюрморт

1. голос

2. право голоса

auf die ~ des Gewissens hören
auf seine ~ kommt es an
beschließende, entscheidende ~
der ~ seines Herzens folgen
die ~ der Presse

der ~ der Vernunft Gehör
schenken
der Vorschlag wurde mit 20 ~n
angenommen
eine ~ haben
es gibt ~n, die sagen...

j-n an der ~ erkennen
gereizte ~
schüchterne (zaghafte) ~
mit beschließender (beratender) ~

mit erhobener ~
mit sachlicher ~
ruhige ~
seine ~ abgeben
sich der ~ enthalten

խղճի ձայնին հետևել
նրա ձայնը վճռորոշ է
վճռորոշ՝ որոշիչ ձայն
սրտի թելադրանքին հետևել
տպագրության՝ մամուլի
անդրադարձումներ
բանականության ձայնին
ականջ դնել
առաջարկությունն ընդունվեց 20
ձայնով
ձայնի իրավունք ունենալ
հնչում են ձայներ, որոնք
հաստատում են, որ...

մեկին ձայնով ճանաչել
նյարդային՝ գրգռված ձայն
երկչոտ ձայն
վճռական (խորհրդակցական)
ձայնի իրավունքով
բարձր ձայնով
գործնական տոնով
հանգիստ ձայն
քվեարկել, իր ձայնը տալ
ձեռնպահ մնալ

следовать голосу совести
его голос решает
решающий голос
следовать велению сердца
отклики печати

прислушиваться к голосу
разума
предложение было принято
20-ю голосами
иметь право голоса
раздаются голоса,
утверждающие, что...
(высказывается мнение, что...)
узнавать кого-л. по голосу
раздражённый голос
робкий голос
с правом решающего
(совещательного) голоса
в повышенном тоне
деловым тоном
спокойный голос
отдавать свой голос, голосовать
воздержаться (при голосовании)

seine ~ erheben	ձայնը բարձրացնել. խոսել սկսել	повышать голос, поднять свой голос; начинать говорить
soviel ~n erhalten	այսքան ձայն հավաքել	собрать столько-то голосов
vernünftige ~n	ողջամիտ ձայներ	здравые голоса
überwältigende ~nmehrheit	ձայների ճնշող մեծամասնություն	подавляющее большинство голосов
ungültige ~n	անվավեր ձայներ	недействительные голоса
Wähler~n	ընտրողների ձայներ	голоса избирателей
stimmen <i>vi</i>	1. քվեարկել, ձայն տալ 2. իրականությանը համապատասխանել	1. голосовать, подавать голос 2. соответствовать истине
~ <i>vt</i>	լարել (երաժշտ. գործիքը)	настраивать (муз. инструмент)
Stimmenausählung <i>f -; ohne pl</i>	ձայների հաշվում	подсчёт голосов
Stimmengewinn <i>m -(e)s; -e</i>	ստացված ձայների թվի ավելացում	увеличение числа полученных голосов
Stimmengleichheit <i>f -; ohne pl</i>	ձայների հավասարություն	равенство голосов
Stimmenverlust <i>m -es; -e</i>	ձայների կորուստ	потеря голосов
Stimmrecht <i>n -(e)s; ohne pl</i>	ձայնի իրավունք	право голоса
kein ~ haben	ձայնի՝ քվեարկելու իրավունք չունենալ	не иметь право голоса
stimmberechtigt sein	ձայնի՝ քվեարկելու իրավունք ունենալ	иметь право голоса
Stimmung <i>f -; -en</i>	տրամադրություն	настроение
stimmungsvoll <i>adv</i>	տրամադրված	с настроением

Stoffbahn *f -; -en*
Storch *m -es; Störche*
strafbar *a*
Strafe *f -; -n*
Strafgericht *n -(e)s; -e*
Strafkammer *f -; -n*

Strafrecht *n -es; ohne pl*
strafrechtlich *a*
Strafrechtsartikel *m -s; -*
Strafsache *f -; -n*
Straftat *f -; -en*
Strafverfolgung *f -; ohne pl*
Strafvollzug *m -(e)s;*

Strafvollzugsbehörde *f -; -n*

Strapaze *f -; -n*
Straßenverkehr *m*
Streben *n -s; ohne pl*
streben *vi (nach D)*
streckenweise *adv*

կտավ, քաթան
 արագիլ
 պատժի ենթակա, պատվելի
 պատիժ, տույժ
 քրեական գործերով դատարան
 քրեական գործերով դատական
 պալատ
 քրեական իրավունք
 քրեաիրավական
 քրեական օրենսգրքի հոդված
 քրեական գործ
 հանցանք, հանցագործություն
 քրեական հետապնդում
 1. պատժի իրականացում
 2. ազատազրկման վայր
 3. պատիժն իրականացնող
 մարմին
 ազատազրկման վայրերը հսկող
 հիմնարկ
 չարչարանք, զրկանք
 փողոցային երթևեկություն
 ձգտում
 ձգտել, հասնել
 տնդ-տնդ

полотнище, холст
 аист
 наказуемый
 наказание, кара, штраф
 суд по уголовным делам
 судебная палата по уголовным
 делам
 уголовное право
 уголовно-юридический
 статья уголовного кодекса
 уголовное дело
 преступление
 уголовное преследование
 1. исполнение наказания
 2. место лишения свободы
 3. органы исполнения наказания
 орган, ведающий местами
 лишения свободы
 мучение, страдание
 дорожное движение
 стремление
 стремиться, добиваться
 местами

Streifen *m -s; -*

Streik *m -(e)s; -s*

Streit *m -(e)s; pl selten*

Streitfall *m -(e)s; ...fälle*

Streitigkeit *f -; -en*

Streitkräfte *pl*

Strohblume *f -; -n*

Strom *m -(e)s; Ströme*

~erzeugung *f*

~lieferung *f*

Strukturwandel *m -s; -*

Stückgut *n -(e)s; ...güter*

Stückgutfrachter *m -s; -*

stuckiert *a*

Studentenwerk *n -(e)s; -e*

1. շերտ, նրիզ

2. տնասնրիզ

3. պահուսակ

գործադուլ

1. վեճ

2. գործ, դատավարություն

վիճահարույց դեպք

երկպառակություն, գժտություն,

տարածայնություն

ռազմական ուժեր

անթառամ (ծաղիկ)

հոսանք

հոսանքի՝ էլեկտրաէներգիայի

արտադրություն

էլեկտրամատակարարում

1. կառուցվածքային

փոփոխություն

2. ապրելակերպ, վարքագիծ

մանր, հատով բեռ

բեռնափոխադրանավ

(մանրահատ ապրանքների)

սվաղած

ուսանողական համագործակ-

ցության միություն

1. полоса, лента

2. киноплёнка

3. обойма

забастовка, стачка

1. спор; ссора

2. дело, процесс

спорный случай, конфликт

разногласие, распри,

междусобица

военные силы

бессмертник (цветок)

ток

генерирование тока

электроснабжение

1. структурное изменение

2. образ жизни, поведение

мелкий, штучный груз

грузовое судно по перевозке

(штучного груза)

отштукатуренный

организации взаимопомощи

студентов

Studie <i>f -; -n</i>	էսքիզ, ուրվագիծ, էսյուդ	эскиз, этюд
